

«ԱՅՈՒՆԻՔԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ» ԽՈՐԱԳՐՈՎ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Գիտաժողովին զեկուցվող ամբողջական հոդվածի էլեկտրոնային տարբերակը անհրաժեշտ է ներկայացնել մինչև **2026 թվականի մայիսի 30-ը**:

Ներկայացվող գիտական հոդվածը պետք է բավարարի ներքոնշյալ պահանջները.

1. Հոդվածը ներկայացնել MS Word միջավայրում՝ ձևակերպված հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներից որևէ մեկով:
2. Էջի ֆորմատը՝ A4, գրքային:
3. Տեքստի տառատեսակը՝ GHEA Grapalat (հայերենի համար), Sylfaen (ռուսերենի և անգլերենի համար):
4. Տեքստի տառաչափը՝ 10 (GHEA Grapalat), 11 (Sylfaen), միջտողային հեռավորությունը՝ 1,15:
5. Լուսանցքները՝ վերևից՝ 5 սմ, ներքևից՝ 4,75 սմ, ձախից՝ 6,2 սմ, աջից՝ 1,8 սմ, պարբերության սկիզբը՝ 0,75 սմ:
6. Բոլոր էջերը պետք է համարակալվեն: Էջադրումը՝ էջի ներքևում, կենտրոնում, էջատակը (footer)՝ 4,5 սմ:
7. Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից, տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ կամ տողադարձեր:
8. Առաջին տողում՝ ձախից, դնել աշխատանքի բնագավառը և ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) նիշը (UDC Summary)՝ բնագրի լեզվով, գլխատառերով, թավ:
9. Հոդվածի վերնագիրը ներկայացնել երկրորդ տողում՝ բնագրի լեզվով, գլխատառերով, թավ, հավասարեցումը՝ կենտրոնից:
10. Վերնագրից մեկ տող ներքև նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը: Հավասարեցումը՝ կենտրոնից, թավ:
11. Մեկ տող բաց թողնելով՝ հոդվածի բնագրի լեզվով, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ, ներկայացնել հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract)՝ մինչև 100 բառի սահմանում՝ ներառելով հոդվածի նյութի վերաբերյալ որոշակի, հստակ տեղեկատվություն՝ գիտական նորույթի արտացոլմամբ:
12. Մեկ տող ներքև հոդվածի բնագրի լեզվով ներկայացնել «Բանալի բառեր» և նշել հոդվածի բովանդակության հետ կապված 5-7 բառ, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:
13. Մեկ տող ներքև ներկայացնել հոդվածի բուն շարադրանքը (**ներածություն**՝ ուսումնասիրման առարկայի արդիականության հիմնավորմամբ, հետազոտության հիմնական նպատակի, տեսական և/կամ գործնական հիմքերի, գիտական նորույթի արտացոլմամբ, **հիմնական մաս**՝ հետազոտության թեմայով նախկինում կատարված գիտական հրապարակումների, արդի մոտեցումների, հեղինակի կատարած ուսումնասիրության, տեսակետների վերլուծությամբ, **ամփոփում**՝ հետազոտության արդյունքների՝ եզրահանգումների, տեսական և գործնական նշանակություն ունեցող առաջարկությունների, գիտական նորույթ պարունակող խնդրի լուծման, հաստատված վարկածի ընդգրկմամբ):

14. Հողվածում առկա փոխառված մտքերի ու պնդումների համար հղումների առկայությունը պարտադիր է: Հղումները տեքստում ներկայացնել քառակուսի փակագծերի մեջ՝ նշելով տվյալ աշխատանքի համարը գրականության ցանկից [1], [3-5]: Անհրաժեշտության դեպքում նշել նաև էջերը՝ [2, էջ 37]:
15. Բանաձևային արտահայտությունները անհրաժեշտ է հավաքել Microsoft Equation ծրագրի միջոցով: Պետք է համարակալել միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի ((1), (2),...), համարակալումները պետք է լինեն աջից և դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն միավորների միջազգային SI համակարգին:
16. Աղյուսակները տեքստում տեղադրել համապատասխան հղումից հետո: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է ունենա հերթական համար (առանց № նշանի) և վերնագիր՝ տեղադրված աղյուսակից վերև՝ աջ հավասարեցմամբ (տառաչափը՝ 9):
17. Գծապատկերները, գրաֆիկական նյութերը ներկայացնել նկարի տեսքով: Նկարները պետք է ունենան հերթական համար և անվանում՝ տեղադրված նկարի ներքևում՝ կենտրոնական հավասարեցմամբ (տառաչափը՝ 9):
18. Հողվածի շարադրանքից հետո մեկ տող ներքև ներկայացնել օգտագործված գրականության ցանկը՝ ներկայացնելով ուսումնասիրված աշխատանքների հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան (հարկ եղած դեպքում՝ նաև հայրանվան) առաջին տառը, աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը, էջ(եր)ը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում նշել համապատասխան նյութի տեղադրման հասցեն և փակագծում՝ ծանոթանալու օրը, ամիսը, տարեթիվը:
19. Օգտագործված գրականության ցանկից հետո՝ մեկ տող ներքև, հողվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով՝ հայերենի դեպքում՝ ռուսերեն և անգլերեն, շարադրել հողվածի գլխամասը (հողվածի վերնագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը (թավ), ամփոփագիրն ու բանալի բառերը):
20. Հողվածի ծավալը՝ առավելագույնը 12 էջ (ներառյալ գրականության ցանկը):
21. Գրականության ցանկից հետո հողվածի բնագրի լեզվով անհրաժեշտ է ներկայացնել տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին՝ նշելով ազգանունը, անունը, հայրանունը, բուհի լրիվ անվանումը, մասնագիտությունը (կրթական ծրագիրը), կուրսը, էլեկտրոնային հասցեն, գիտական ղեկավարի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը (եթե առկա է):

**Չափորոշիչներին չհամապատասխանող հողվածները չեն ընդունվելու:
Ձեկուցման առավելագույն տևողությունը սահմանվում է 10 րոպե:**

Հետադարձ կապ՝

ԳՊՀ ՈՒԳԸ նախագահ՝ Մանե Արջունց (հեռ.՝ 077995732),

ԳՊՀ ՈՒԳԿԿ բաժնի վարիչ՝ Գայանե Շաբունց (հեռ.՝ 077637320),

E-mail: gorissu.sss@gmail.com